

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ղազախստանի
Հանրապետության Կառավարությունը, ցանկանալով կնքել եկամուտների և գույքի
կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին
Կոնվենցիա,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին:

Հոդված 1

Անձինք, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պետություններից մեկի կամ երկուսի ռե-
զիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Այն հարկերը, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է եկամտի և գույքի հարկերի նկատմամբ, ո-
րոնք գանձվում են Պետության, նրա կենտրոնական կամ տեղական իշխանության
մարմինների անունից՝ անկախ դրանց գանձման մեթոդից:

2. Եկամուտներից և գույքից գանձվող հարկեր են համարվում եկամտի ընդհա-
նուր գումարից, գույքի ընդհանուր գումարից կամ եկամտի կամ գույքի առանձին
տարրերից գանձվող բոլոր տեսակի հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ
գույքի օտարումից առաջացած եկամուտներից ստացված հարկերը, ձեռնարկությունների
կողմից վճարվող աշխատավարձի ընդհանուր գումարից
գանձվող հարկերը, ինչպես նաև գույքի արժեքի հավելածից գանձվող հարկերը:

3. Սույն Կոնվենցիայի գործողությունը տարածվում է, մասնավորապես,
գոյություն ունեցող հետևյալ հարկերի վրա.

Հայաստանի Հանրապետությունում՝

- ա) շահութահարկ,
 - բ) եկամտահարկ,
 - գ) գույքահարկ,
- (այսուհետ՝ հայկական հարկեր).

Ղազախստանի Հանրապետությունում՝

- ա) կորպորատիվ եկամտահարկ,
 - բ) անհատական եկամտաչափահարկ,
 - գ) գույքահարկ
- (այսուհետ՝ ղազախական հարկեր):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև սույն հոդվածի 3-րդ կետում նշված
ցանկացած հարկին նմանատիպ կամ բնույթով նման հարկերի նկատմամբ, որոնք
կգանձվեն սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո՝ ի լրումն գործող հարկերի
կամ դրանց փոխարեն: Պետությունների իրավասու մարմինները միմյանց կժամուցեն
Պետությունների ազգային օրենսդրության մեջ հարկմանը վերաբերող ցանկացած
նշանակալի փոփոխության մասին:

Հոդված 3
Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար կիրառվում են հետևյալ տերմինները.

ա) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ հողը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ համաձայն ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի,

բ) «Ղազախստան» նշանակում է Ղազախստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելիս ներառում է Ղազախստանի Հանրապետության պետական տարածքը և այն գոտիները, որտեղ Ղազախստանի Հանրապետությունը, իր ազգային օրենսդրության և միջազգային պայմանագրերի (որոնց նա մասնակից է) համաձայն, կարող է իրականացնել իր ինքնիշխան իրավունքներն ու իրավագործությունը,

գ) «Պետություն»-ը, ենթատեքստից կախված, նշանակում է Հայաստան կամ Ղազախստան,

դ) «անձ» - ներառում է ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» - կորպորատիվ կազմավորում կամ ցանկացած տնտեսական միավոր, որոնք հարկման նպատակների համար դիտարկվում են որպես կորպորատիվ կազմավորում,

զ) «ձեռնարկություն» - կիրառվում է ցանկացած տեսակի ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

է) «Պետության ձեռնարկություն» և «մյուս Պետության ձեռնարկություն» նշանակում են, համապատասխանաբար, Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» նշանակում է՝ Պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով, ավտոմոբիլային տրանսպորտով ցանկացած փոխադրում՝ բացառությամբ, երբ նավը, օդանավը կամ ավտոմոբիլային տրանսպորտը շահագործվում են բացառապես մյուս Պետությունում գտնվող կետերի միջև,

թ) «իրավասու մարմին» նշանակում է.

i) Հայաստանում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն կամ նրանց լիազորած ներկայացուցիչներ,

ii) Ղազախստանում՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն կամ նրա լիազորած ներկայացուցիչ.

ժ) «ազգային անձ» նշանակում է.

i) Պետության քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձ,

ii) Պետության ազգային օրենսդրության համապատասխան՝ այդպիսի կարգավիճակ ստացած իրավաբանական անձ, ընկերություն կամ հաստատություն,

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է՝ մասնագիտական ծառայությունների և այլ անկախ բնույթի գործունեության իրականացում,

ժբ) «փաստացի ղեկավարման վայր» նշանակում է՝ հիմնական կառավարման իրականացման և իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար անհրաժեշտ առևտրային ստրատեգիկ որոշումների ընդունման վայր:

2. Սույն Կոնվենցիան կիրառվելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե այլ բան ենթատեքստից չի բխում, կունենա այն նշանակությունը, որը նա այդ պահին ունի Պետության ազգային օրենսդրությամբ այն հարկերի առնչությամբ, որոնց վրա տարածվում է սույն Կոնվենցիան: Պետության հարկային օրենսդրությամբ կիրառվող տերմինի ցանկացած նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով սվյալ տերմինին տրված նշանակության նկատմամբ:

Հոդված 4 Ռեզիդենտ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության ազգային օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր բնակության վայրի, ռեզիդենտության, ստեղծման վայրի, կառավարման վայրի կամ նման բնույթի ցանկացած այլ չափանիշի հիման վրա:

«Պետության ռեզիդենտ» տերմինը ներառում է նաև այդ Պետությունը, նրա կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինները կամ Պետության կենտրոնական (ազգային) բանկը:

Ռեզիդենտ չեն հանդիսանում այն անձինք, ովքեր ենթակա են հարկման Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Եթե, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պետությունների ռեզիդենտ, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ օգտագործման նպատակով իր տրամադրության տակ ունի մշտական կացարան: Եթե նա երկու Պետություններում էլ օգտագործման նպատակով իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ նա ունի առավել սերտ անձնական և տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն):

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում իր տրամադրության տակ չունի օգտագործման նպատակով մշտական կացարան, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում, կամ եթե նա երկու Պետություններում էլ սովորաբար չի բնակվում, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է,

դ) եթե ռեզիդենտի կարգավիճակը հնարավոր չէ որոշել «ա»-«գ» ենթակետերին համապատասխան, Պետության իրավասու մարմիններն այդ հարցի կապակցությամբ որոշում են կայացնում փոխադարձ համաձայնությամբ:

3. Եթե, սույն հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի ղեկավարման վայրը:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության մշտական վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը մասնավորապես ներառում է.

ա) կառավարման վայր,

բ) բաժանմունք,

գ) գրասենյակ,

դ) ֆաբրիկա,

ե) արհեստանոց,

զ) հանրահոր, նավթի կամ գազի հորատանոց, քարհանք, սարք, շինություն

կամ ցանկացած այլ հետազոտման կամ բնական պաշարների արդյունահանման վայր (ներառյալ նավը):

3. Շինարարական հրապարակը կամ շինարարական, մոնտաժման կամ հավաքման օբյեկտը կազմում են մշտական հաստատություն, եթե միայն այդպիսի հրապարակը կամ օբյեկտը գոյություն ունեն ավելի քան 6 ամիս ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի դիտարկվում որպես ներառող.

ա) շինությունների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման, առաքման կամ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման, առաքման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,

զ) գործունեության մշտական վայրի պահումը սույն կետի, ներառյալ «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդպիսի համակցության արդյունքում առաջացած գործունեության մշտական վայրի համակցված գործունեությունն ունի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից տարբերվող անձը, որի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածի 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից և ունի ու սովորաբար օգտագործում է Պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը համարվում է այդ Պետությունում մշտական հաստատություն ունեցող այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության կապակցությամբ, եթե միայն նրա գործունեությունը չի սահմանափակվում սույն հոդվածի 4-րդ կետում նշված գործունեության տեսակներով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, սույն կետի դրույթների

համաձայն՝ այդ գործունեության մշտական վայրը չի վերաժում մշտական հաստատության:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ Պետությունում բրոքերի, կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակով ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը հսկում է մյուս Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ այդ մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող (կամ մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով) ընկերությանը կամ վերահսկվում է նման ընկերության կողմից, այդ ընկերություններից մեկին չի վերաժում մյուսի մշտական հաստատության:

Հոդված 6

Եկամուտ անշարժ գույքից

1. Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պետությունում գտնվող անշարժ գույքից ստացվող եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից և անտառային տնտեսությունից ստացվող եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նա ունի այն Պետության ազգային օրենսդրության համապատասխան, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այս տերմինը ցանկացած դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, հողօգտագործման և հողային սեփականության իրավունքները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և հանրային ռեսուրսների, աղբյուրների և այլ բնական ռեսուրսների մշակման կամ մշակման իրավունքի համար որպես փոխհատուցում կատարվող փոփոխական կամ հաստատագրված վճարումների իրավունքները: Նավերը և օդանավերը կամ ավտոմոբիլային տրանսպորտը որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամտի նկատմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից առաջացած եկամտի նկատմամբ:

Հոդված 7

Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի ձեռնարկությունը մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում կամ չի իրականացրել այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը մյուս Պետությունում իրականացնում է կամ իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերագրվում է.

ա) այդ մշտական հաստատությանը,

բ) այդ մյուս Պետությունում ապրանքների կամ արտադրանքի վաճառքին, որոնք նույնական են մշտական հաստատության միջոցով վաճառվող ապրանքներին կամ արտադրանքին, կամ

գ) այդ մյուս Պետությունում իրականացվող այլ ձեռնարկատիրական գործունեությանը, որը իր բնույթով նույնական է նման մշտական հաստատության միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեությանը:

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, եթե Պետության ձեռնարկությունը մյուս Պետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, ապա Պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ առանձին և անջատ ձեռնարկություն, գրադված՝ այդպիսի կամ համանման գործունեությամբ, այդպիսի կամ համանման պայմաններով, և գործեր ամբողջովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է մշտական հաստատության նպատակների համար կատարված, փաստաթղթերով հիմնավորված ծախսերի նվազեցում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչարարական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե որևէ այլ տեղ:

Մշտական հաստատությունն իրավունք չունի հարկման բազայից նվազեցնել այն գումարները, որոնք մշտական հաստատության կողմից վճարվել են ձեռնարկությանը (այլ, քան կատարված ծախսերի փոխհատուցումը)։

ա) պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիի, հոնորարների և այլ վճարումների տեսքով,

բ) մատուցած ծառայությունների կամ դեկլարման համար միջնորդավճարների տեսքով,

գ) ձեռնարկության կողմից (բացառությամբ բանկերի) նրան տրամադրված փոխառության դիմաց՝ տոկոսների տեսքով:

Մշտական հաստատության շահույթը չպետք է ներառի այն գումարները (այլ, քան կատարված ծախսերի փոխհատուցումը), որոնք մշտական հաստատությունն ստացել է ձեռնարկությունից.

ա) պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար՝ ռոյալթիի, հոնորարների և այլ վճարումների տեսքով,

բ) մատուցած ծառայությունների կամ դեկլարման համար՝ միջնորդավճարների տեսքով,

գ) նրա կողմից ձեռնարկությանը (բացառությամբ բանկերի) տրամադրված փոխառության դիմաց՝ տոկոսների տեսքով:

4. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվում մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի միայն գնման հիման վրա:

5. Եթե շահույթը ներառում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում դիտարկվող եկամուտների տեսակներ, ապա այդ հոդվածների դրույթները չեն ազդի սույն հոդվածի դրույթները վրա:

6. Սույն հոդվածի նախորդ կետերի նպատակների համար մշտական հաստատությանը վերաբերող շահույթը յուրաքանչյուր տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե չկան այդ կարգի փոփոխման ծանրակշիռ և բավարար պատճառներ:

Հոդված 8

Միջազգային փոխադրումներից ստացված եկամուտներ

1. Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված տրանսպորտային

միջոցների շահագործումից ստացված եկամուտները հարկվում են միայն այդ Պետությունում:

2. Պետության ռեզիդենտի կողմից սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բեռնարկերի և դրանց առնչվող՝ միջազգային փոխադրումներում շահագործման համար անհրաժեշտ սարքավորումների վարձակալությունից ստացված եկամուտները հարկվում են միայն այդ Պետությունում:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետի դրույթները կիրառվում են նաև Պետության ռեզիդենտի կողմից՝ տրանսպորտային միջոցների շահագործման համատեղ գործունեությունում մասնակցելուց ստացված եկամուտների նկատմամբ, բայց միայն եկամտի այն մասով, որը վերաբերում է համատեղ գործունեությունում նրա ունեցած մասնաբաժնին:

Հոդված 9

Զուգորդված (ասոցացված) ձեռնարկություններ

1. Եթե՝

ա) Պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են և Պետության ձեռնարկության, և մյուս Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև՝ նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կլինեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվեգրվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների առկայության պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի կազմում և, համապատասխանաբար, հարկվել:

2. Եթե Պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում հարկվում է, և այդ կերպով ներառված շահույթը հանդիսանում է շահույթ, որը կհաշվեգրվեր առաջին հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև ստեղծված փոխհարաբերությունները այնպիսին լինեին, ինչպիսիք գոյություն ունեն անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այդ շահույթից գանձվող հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պետք է հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և Պետության իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում պետք է խորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

Շահաբաժիններ

1. Շահաբաժինները, որոնք վճարում է Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը մյուս Պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այդ Պետության ազգային օրենսդրության համապատասխան, բայց եթե շահաբաժինների

փաստացի սեփականատերը մյուս Պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների ընդհանուր գումարի 10 տոկոսը:

Սույն կետի դրույթները չեն շոշափում ընկերության հարկումը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող այլ իրավունքներից, եկամուտ շահույթին մասնակցությունից, ինչպես նաև եկամուտ այլ կորպորատիվ իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պետության ազգային օրենսդրության համապատասխան, որի ռեզիդենտ է հանդիսանում շահույթ բաշխող ընկերությունը:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե Պետության ռեզիդենտ հանդիսացող՝ շահաբաժինների փաստացի սեփականատերը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այդ մյուս Պետությունում տեղակայված մշտական հաստատության միջոցով, և հոլդինգը կամ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրապես վերաբերում է այդպիսի մշտական հաստատությանը: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները:

5. Եթե Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտներ է ստանում մյուս Պետությունից, ապա այդ մյուս Պետությունը չպետք է գանձի այդ ընկերության կողմից վճարված շահաբաժիններից ցանկացած հարկ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ մյուս Պետության ռեզիդենտին վճարվող այդպիսի շահաբաժինները իրապես կապված են այդ մյուս Պետությունում տեղակայված մշտական հաստատության հետ, և ընկերության չբաշխված շահույթից հարկ չի գանձվում, եթե անգամ վճարվող շահաբաժինները կամ չբաշխված շահույթը լիովին կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող եկամտից:

6. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող խոչընդոտել Պետությանը՝ հարկել մյուս Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության, այդ Պետությունում տեղակայված, մշտական հաստատությանը վերաբերող շահույթը՝ ի լրումն այն հարկի, որը հաշվեգրվում է այդ Պետության ազգային անձ հանդիսացող ընկերության շահույթին՝ պայմանով, որ ցանկացած այս ձևով հաշվեգրված լրացուցիչ հարկ չի գերազանցի այդպիսի շահույթի գումարի 5 տոկոսը, որը չի ենթարկվել այդպիսի լրացուցիչ հարկման նախորդ հարկային տարիներին: Սույն կետի նպատակների համար շահույթը որոշվում է սույն կետում հիշատակված լրացուցիչ հարկից տարբերվող բոլոր այն հարկերի նվազեցումից հետո, որոնք գանձվում են այն Պետությունում, որտեղ տեղակայված է մշտական հաստատությունը:

Հոդված 11

Տոկոսներ

1. Տոկոսները, որոնք գոյանում են Պետությունում և վճարվում են մյուս Պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պետությունում, որտեղ դրանք գոյանում են, և՛ այդ Պետության ազգային օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը, լինելով տոկոսների փաստացի սեփականատեր, հանդիսանում է մյուս Պետության ռեզիդենտ, ապա այդպես գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների ընդհանուր գումարի 10 տոկոսը:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ Պետությունում գոյացող տոկոսներն ազատվում են այդ Պետությունում հարկումից, եթե դրանք ենթակա են

վճարման և ստացվում են մյուս Պետության, նրա կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների կամ այդ մյուս Պետության կենտրոնական (ազգային) բանկի կամ ցանկացած նման այլ կազմակերպության կողմից, որը հետագայում կարող է համաձայնեցվել Պետությունների իրավասու մարմինների միջև:

4. «Տոկոսներ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից՝ ապահովված կամ չապահովված գրավով, պարտապաններին շահույթին մասնակցելու իրավունք տվող կամ չտվող, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ փոխառության տոմսերից կամ պարտատոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի պարզևավճարներն ու շահումները: Սույն հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները չեն դիտվում որպես տոկոսներ:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պետությունում, որտեղ գոյանում են տոկոսները, այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի նկատմամբ տոկոսները վճարվում են, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները:

6. Համարվում է, որ տոկոսները գոյանում են Պետությունում, եթե վճարող է հանդիսանում այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն հանգամանքից՝ Պետության ռեզիդենտ է հանդիսանում, թե ոչ, Պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է պարտքը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, և այդ տոկոսները վճարվում են այդպիսի մշտական հաստատության կողմից, ապա համարվում է, որ նման տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ տեղակայված է այդպիսի մշտական հաստատությունը:

7. Եթե վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ փոխհարաբերությունների պատճառով վճարման համար հիմք ծառայող՝ պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասը ենթակա է հարկման Պետություններից յուրաքանչյուրի ազգային օրենսդրության համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

8. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում, եթե պարտապահանջի, որի նկատմամբ վճարվում են տոկոսները, ստեղծման կամ փոխանցման հետ կապված ցանկացած անձի հիմնական նպատակը կամ հիմնական նպատակներից մեկը եղել է սույն հոդվածից շահ ստանալը՝ այդպիսի պարտապահանջի ստեղծման կամ փոխանցման միջոցով:

Հոդված 12 Ռոյալթի

1. Պետությունում առաջացող և մյուս Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պետությունում, որտեղ դրանք առաջանում են, և՛ այդ Պետության ազգային օրենսդրությանը համապատասխան. սակայն եթե ստացողը, լինելով ռոյալթիի փաստացի

սեփականատեր, հանդիսանում է մյուս Պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի ընդհանուր գումարի 10 տոկոսը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում, որը ստացվում է որպես հատուցում գրական, արվեստաբանական կամ գիտական ստեղծագործությունների, ներառյալ ծրագրային ապահովման, կինոնկարների, ինչպես նաև ռադիոհեռարձակման, հեռուստատեսության կամ գանգվածային սպառման համար օգտագործվող ցանկացած արտադրանքի, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, դիզայնի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի տրամադրման համար կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար, և՛ վճարումներ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգտագործման կամ օգտագործման իրավունքի տրամադրման համար:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, հանդիսանալով մի Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին, իրապես կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները:

5. Համարվում է, որ ռոյալթիները առաջանում են Պետությունում, եթե վճարող է հանդիսանում այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե ռոյալթի վճարող անձը, անկախ Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիները վճարվում են այդպիսի մշտական հաստատության կողմից, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ տեղակայված է մշտական հաստատությունը:

6. Եթե ռոյալթի վճարողի և դրա փաստացի սեփականատիրոջ միջև կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով ռոյալթիի գումարը, որը վերաբերում է օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկությանը, որոնց հիման վրա է վճարվում, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և ռոյալթիի փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պետության ազգային օրենսդրության համապատասխան պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

7. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում, եթե իրավունքների, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին, ստեղծման կամ փոխանցման հետ կապված՝ ցանկացած անձի հիմնական նպատակը կամ հիմնական նպատակներից մեկը եղել է սույն հոդվածից շահ ստանալը՝ այդպիսի իրավունքների ստեղծման կամ փոխանցման միջոցով:

Հոդված 13

Գույքի օտարումից ստացված եկամուտներ

1. Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պետությունում գտնվող անշարժ գույքի (ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում) օտարումից ստացված եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պետության ռեզիդենտի կողմից այն բաժնետոմսերի օտարումից ստացված եկամուտները, որոնց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակի կամ անուղղակի կերպով

ստացվում է մյուս Պետությունում տեղակայված անշարժ գույքից, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պետության ռեզիդենտի կողմից այն շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները, որոնք կազմում են Պետության ձեռնարկությանը պատկանող և մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս, ներառյալ այդպիսի մշտական հաստատության օտարումից (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) ստացված եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

4. Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի, ավտոմոբիլային տրանսպորտի օտարումից կամ այդպիսի նավերի, օդանավերի, ավտոմոբիլային տրանսպորտի շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները հարկվում են միայն այդ Պետությունում:

5. Սույն հոդվածի նախորդ կետերում չհիշատակված ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած եկամուտները հարկվում են միայն այն Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում գույքն օտարող անձը:

Հոդված 14

Վարձու աշխատանքից ստացված եկամուտներ

1. Հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 15-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթները՝ Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի կատարվում մյուս Պետությունում: Եթե վարձու աշխատանքը կատարվում է մյուս Պետությունում, ապա վարձու աշխատանքի կատարման կապակցությամբ ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պետությունում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը հարկվում է միայն առաջին հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է այդ մյուս Պետությունում համապատասխան հարկային տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը կատարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության հետ կապված ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավում, օդանավում կամ ավտոմոբիլային տրանսպորտում կատարվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

Հոդված 15

Տնօրենների հոնորարներ

Տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները, որոնք ստացվել են Պետության ռեզիդենտի կողմից՝ որպես մյուս Պետության ռեզիդենտ ընկերության

տնօրենների խորհրդի կամ համանման այլ մարմնի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 16

Արտիստներ և մարզիկներ

1. Չնայած սույն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի դրույթներին՝ Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պետությունում որպես արվեստի աշխատող, ինչպիսին է քատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին, հարկվում է այն Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

Հոդված 17

Կենսաթոշակներ և համանման այլ վճարումներ

Սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան՝ Պետության ռեզիդենտին նախկինում կատարած աշխատանքի համար վճարվող կենսաթոշակները և համանման այլ վճարումները հարկվում են միայն այդ Պետությունում:

Հոդված 18

Պետական ծառայություն

1. Պետության կամ նրա կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների կողմից այդ Պետության կամ նրա կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների համար իրականացված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարվող աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները (կենսաթոշակից տարբերվող) հարկվում են միայն այդ Պետությունում:

Սակայն այդպիսի աշխատավարձը և համանման այլ վարձատրությունը հարկվում են միայն մյուս Պետությունում, եթե ծառայությունը իրականացվում է այդ մյուս Պետությունում, և այդ մյուս Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

ա) հանդիսանում է այդ մյուս Պետության քաղաքացի, կամ

բ) չի դարձել այդ մյուս Պետության ռեզիդենտ միայն ծառայություն մատուցելու նպատակով:

2. Պետության կամ նրա կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից այդ Պետության կամ նրա կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների համար իրականացված ծառայության դիմաց ֆիզիկական անձին վճարված ցանկացած կենսաթոշակ հարկվում է միայն այդ Պետությունում:

Սակայն այդպիսի կենսաթոշակը հարկվում է միայն մյուս Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ մյուս Պետության ռեզիդենտն ու քաղաքացին:

3. Սույն Կոնվենցիայի 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պետության կամ նրա կենտրոնական և տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց ռոճիկի, աշխատավարձի և այլ համանման վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 19 Ուսանողներ

Վճարները, որոնք ուսանողը կամ պրակտիկանտը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջին հիշատակված Պետությունում բացառապես կրթություն ստանալու կամ պրակտիկա անցնելու նպատակով, ստանում է իր կեցությունն ապահովելու, կրթություն ստանալու կամ պրակտիկա անցնելու նպատակով, այդ Պետությունում չի հարկվում՝ պայմանով, որ այդ գումարների աղբյուրները գտնվում են այդ Պետությունից դուրս:

Հոդված 20 Այլ եկամուտներ

1. Պետության ռեզիդենտի եկամտի տեսակները, որոնց մասին չի հիշատակվում սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում, անկախ դրանց առաջացման վայրից՝ հարկվում են միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացված եկամտից տարբերվող եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի եկամուտներ ստացողը, հանդիսանալով Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պետությունում այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ ստացվել է եկամուտը, իրապես կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 21 Գույք

1. Սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պետությունում գտնվող գույքը հարկվում է միայն այդ մյուս Պետությունում:

2. Գույքը, որը ներկայացված է Պետության ձեռնարկության՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքով, հարկվում է այդ մյուս Պետությունում:

3. Գույքը, որը ներկայացված է Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով, օդանավերով կամ ավտոմոբիլային տրանսպորտով և այդպիսի նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային տրանսպորտի շահագործման հետ կապված շարժական գույքով, հարկվում է միայն այդ Պետությունում:

4. Պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը հարկվում են միայն այդ Պետությունում:

Հոդված 22 Կրկնակի հարկման բացառումը

1. Եթե Պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել մյուս Պետությունում, ապա առաջին հիշատակված Պետությունը թույլ կտա.

ա) այդ ռեզիդենտի եկամտի հարկը նվազեցնել այդ մյուս Պետությունում վճարված եկամտի հարկի գումարի չափով,

բ) այդ ռեզիդենտի գույքի հարկը նվազեցնել այդ մյուս Պետությունում վճարված գույքի հարկի գումարի չափով:

Այդպիսի նվազեցումները ցանկացած դեպքում չպետք է գերազանցեն մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը վերագրելի է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե, սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան, Պետության ռեզիդենտի ստացվող եկամուտը կամ գույքը ազատված է հարկումից այդ Պետությունում, ապա այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդ ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

Հոդված 23 Անխտրականություն

1. Պետության ազգային անձինք մյուս Պետությունում չեն ենթարկվի ավելի ծանր հարկման, քան այն հարկումն է, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք միևնույն հանգամանքներում, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ: Այս դրույթը, չնայած սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներին, կիրառվում է նաև այն անձանց նկատմամբ, որոնք չեն հանդիսանում Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ:

2. Պետության ձեռնարկության՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի պակաս բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումն է: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պետությանը մյուս Պետության ռեզիդենտներին նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան դրության հիման վրա հարկման նպատակներով այնպիսի անձնական հարկային արտոնություններ և նվազեցումներ տրամադրել պարտավորեցնող, ինչպիսիք Պետությունը տրամադրում է իր ռեզիդենտներին:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են սույն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պետության ձեռնարկության կողմից մյուս Պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով պետք է ենթարկվեն նվազեցման նույն պայմաններով, ինչպես կնվազեցվելին, եթե դրանք վճարվելին առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին: Նմանապես, Պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պետության ռեզիդենտին այդպիսի ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես նվազեցվում է պարտքը առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:

4. Պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է կամ վերահսկվում է մյուս

Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը հիշատակված Պետությունում չպետք է ենթարկվեն ավելի ծանր հարկման, քան այն հարկումն է, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

5. Սույն հոդվածի դրույթները, չնայած Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներին, կիրառվում են հարկերի բոլոր տեսակների նկատմամբ:

Հոդված 24

Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Եթե անձը գտնում է, որ Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, անկախ այդ Պետությունների ազգային օրենսդրությունով նախատեսված պաշտպանության միջոցներից, ներկայացնել իր գործն այն Պետության իրավասու մարմնի քննարկմանը, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե նրա գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Դիմումը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողությունների մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե Պետության իրավասու մարմինը դիմումը համարի հիմնավորված, և եթե նա չկարողանա հանգել բավարար լուծման, ապա նա կձգտի խնդիրը լուծել մյուս Պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումից խուսափելու նպատակով: Չեռք բերված ցանկացած համաձայնություն կիրականացվի՝ անկախ Պետությունների ազգային օրենսդրություններում նախատեսված որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած կձգտեն լուծել փոխադարձ համաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել սույն Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը վերացնելու նպատակով:

4. Սույն Կոնվենցիայի նախորդ կետերի ընթրնման առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով Պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ: Եթե համաձայնության գալու համար նպատակահարմար է կազմակերպել կարծիքների բանավոր փոխանակում, այդպիսի փոխանակումը կարող է տեղի ունենալ Պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնաժողովի նիստի շրջանակներում:

Հոդված 25

Տեղեկատվության փոխանակում

1. Պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկատվություն, որի վրա տարածվում են Պետությունների կամ նրանց կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների անունից գանձվող հարկերին վերաբերող՝ սույն Կոնվենցիայի կամ ազգային օրենսդրության դրույթները՝ այնքանով, որքանով հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պետության կողմից 1-ին կետին համապատասխան ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի նույն ձևով, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկատվությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք կապված են 1-ին կետում նշված հարկերի գնահատման կամ հարկադիր գանձման կամ դատական հետապնդման կամ դրանց հետ կապված բողոքների քննարկման հետ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկատվությունը օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ընդունման ժամանակ:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պետությանը պարտավորեցնող.

ա) ձեռնարկել այդ կամ մյուս Պետության օրենսդրությանը և վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցներ,

բ) տրամադրել տեղեկատվություն, որը չի կարելի ստանալ այդ կամ մյուս Պետության օրենսդրությամբ կամ ընդունված վարչական պրակտիկայի համաձայն,

գ) տրամադրել տեղեկատվություն, որը կբացահայտեր որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկատվություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե տեղեկատվությունը պահանջվում է Պետության կողմից՝ սույն հոդվածին համապատասխան, մյուս Պետությունը օգտագործում է իր տրամադրության տակ եղած տեղեկատվություն ստանալու միջոցները պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար, եթե նույնիսկ այդ մյուս Պետությունը այդպիսի տեղեկատվության կարիքը կարող է չունենալ իր սեփական հարկման նպատակների համար: Նախորդ նախադասության մեջ պարունակվող պարտավորությունը հաշվի է առնում 3-րդ կետի սահմանափակումները, բայց ոչ մի դեպքում այդպիսի սահմանափակումը չի մեկնաբանվի որպես Պետությանը՝ տեղեկատվություն տրամադրելը մերժելու իրավունք տվող միայն այն պատճառով, որ նա չունի ոչ մի ներքին հետաքրքրություն այդպիսի տեղեկատվության մեջ:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պետությանը՝ տեղեկատվություն տրամադրելը մերժելու իրավունք տվող միայն այն պատճառով, որ տեղեկատվությունը տնօրինվում է բանկի, այլ ֆինանսական հաստատության, անվանական սեփականատիրոջ կամ գործակալությունում կամ վստահված անձի կարգավիճակով գործող անձի կողմից, կամ այն պատճառով, որ այդ տեղեկատվությունը վերաբերում է որևէ անձի սեփականության շահերին:

Հոդված 26

Աջակցություն հարկերի գանձման գործում

1. Պետությունների իրավասու մարմինները միմյանց օգնություն կցուցաբերեն եկամտային հայցի հավաքման գործում: Այդ օգնությունը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածների գործողությամբ: Պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանել սույն հոդվածի կիրառման ընթացակարգերը:

2. «Եկամտային հայց» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ Պետությունների կամ նրանց կենտրոնական կամ տեղական իշխանության մարմինների անունից գանձվող ցանկացած տեսակի հարկի գծով առաջացած գումար՝ այնքանով, ինչքանով հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային կամ ցանկացած այլ միջազգային պայմանագրի, որի կողմեր են նրանք հանդիսանում,

ինչպես նաև այդ գումարին առնչվող տոկոսները, վարչական տուգանքները և դրանց հավաքման ու պահման ծախսերը:

3. Այն դեպքում, երբ Պետության եկամտային հայցը պետք է իրականացվի այդ Պետության օրենսդրության համաձայն և վերաբերում է այն անձին, որն այդ պահին, այդ Պետության օրենսդրության համապատասխան, չի կարող խոչընդոտել դրա հավաքումը, այդ եկամտային հայցը, մյուս Պետության իրավասու մարմնի պահանջով, գանձման նպատակով կրնողունվի մյուս Պետության իրավասու մարմնի կողմից: Այդ եկամտային հայցը ենթակա է հավաքման մյուս Պետության կողմից՝ նրա՝ սեփական հարկերի գանձման նկատմամբ կիրառվող օրենսդրության դրույթներին համապատասխան, ինչպես եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը:

4. Այն դեպքում, երբ Պետության եկամտային հայցը այնպիսի հայց է, որի նկատմամբ այդ Պետությունը կարող է, իր օրենսդրության համաձայն, գանձումն ապահովելու համար ձեռնարկել պահպանման միջոցներ, ապա այդ եկամտային հայցը, այդ Պետության իրավասու մարմնի պահանջով, ընդունվում է մյուս Պետության իրավասու մարմնի կողմից՝ պահպանման միջոցներ ձեռնարկելու նպատակով: Այդ մյուս Պետությունը, իր օրենսդրության դրույթներին համապատասխան, պահպանման միջոցներ է ձեռնարկում այդ եկամտային հայցի առնչությամբ այնպես, ինչպես կձեռնարկել, եթե այդ եկամտային հայցը լիներ այդ մյուս Պետության եկամտային հայցը, եթե նույնիսկ այդ միջոցների ձեռնարկման պահին եկամտային հայցը չի կատարվել առաջինը հիշատակված Պետությունում կամ վերաբերում է այն անձին, որն իրավունք ունի խոչընդոտելու դրա հավաքմանը:

5. Անկախ 3-րդ և 4-րդ կետերի դրույթներից՝ Պետության կողմից 3-րդ և 4-րդ կետերի համաձայն ընդունված եկամտային հայցը այդ Պետությունում ենթակա չէ ժամանակային սահմանափակումների կամ գերակայության սահմանման, որոնք, այդ Պետության օրենսդրության համաձայն, կիրառվում են եկամտային հայցի նկատմամբ՝ հայցի բնույթի հիման վրա: Ի հավելումն դրա՝ 3-րդ և 4-րդ կետերի համաձայն Պետության կողմից ընդունված եկամտային հայցը չի կարող այդ Պետությունում ունենալ որևէ գերակայություն, որը կիրառելի է այդ եկամտային հայցի նկատմամբ՝ մյուս Պետության օրենսդրության համաձայն:

6. Պետության եկամտային հայցի գոյության, օրինականության կամ գումարի վերաբերյալ դատական գործերը չեն ներկայացվում մյուս Պետության դատարան կամ վարչական մարմիններ:

7. Այն դեպքում, եթե Պետության կողմից 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան հարցումը ուղարկվելուց հետո և նախքան մյուս Պետության կողմից համապատասխան եկամտային հայցի գանձումն ու փոխանցումը առաջինը հիշատակված Պետությանը, համապատասխան եկամտային հայցը դադարում է գոյություն ունենալ.

ա) 3-րդ կետին համապատասխանող հարցման դեպքում, երբ առաջինը հիշատակված Պետության եկամտային հայցը հնարավոր է իրականացնել այդ Պետության օրենսդրությամբ և պատկանում է այն անձին, որն այդ պահին չի կարող, այդ Պետության օրենսդրության համաձայն, խոչընդոտել դրա հավաքմանը, կամ

բ) 4-րդ կետին համապատասխանող հարցման դեպքում, երբ եկամտային հայցը հանդիսանում է հայց, որի նկատմամբ այդ Պետությունը կարող է, իր օրենսդրության համաձայն, ընդունել եկամտային հայցի գումարի պահպանման միջոցներ՝ գանձումն ապահովելու նպատակով,

ապա առաջինը հիշատակված Պետության իրավասու մարմնին անմիջապես պետք է ծանուցի մյուս Պետության իրավասու մարմնին այդ փաստի մասին, և, մյուս Պետության ընտրությամբ, առաջինը հիշատակված Պետությունը կարող է կասեցնել կամ հետ վերցնել իր հարցումը:

8. Սույն հոդվածի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես Պետությանը պարտավորեցնող՝

ա) ձեռնարկել այդ կամ մյուս Պետության օրենսդրությանը կամ վարչական պրակտիկային հակասող վարչական միջոցներ,

բ) ձեռնարկել պետական քաղաքականությանը (հասարակական կարգին) հակասող միջոցներ,

գ) տրամադրել աջակցություն, եթե մյուս Պետությունը չի ձեռնարկել եկամտային հայցի հավաքման կամ պահպանման համար (կախված կոնկրետ դեպքից) բոլոր համապատասխան միջոցները՝ Պետությունների օրենսդրության կամ վարչական պրակտիկայի համաձայն,

դ) ցուցաբերել աջակցություն այն դեպքերում, երբ վարչական ծանրաբեռնվածությունը այդ Պետության համար անհամամասնական է մյուս Պետության կողմից ստացվող եկամուտներին:

Հոդված 27

Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներ

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի շոշափում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների հարկային արտոնությունները, որոնց այդ արտոնությունները տրամադրված են միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով կամ Պետությունների մասնակցությամբ միջազգային պայմանագրերի դրույթների հիման վրա:

Հոդված 28

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում Պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից:

2. Սույն Կոնվենցիան կիրառվում է.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից կամ հունվարի մեկից հետո վճարվող կամ հաշվանցվող գումարների նկատմամբ, և

բ) այլ հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային ժամանակաշրջանում:

Հոդված 29

Փոփոխություններ և լրացումներ

Պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն Կոնվենցիայում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Կոնվենցիայի անբաժանելի մասը հանդիսացող առանձին արձանագրություններով: Արձանագրությունները ենթակա են վավերացման և ուժի մեջ են մտնում Պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական

ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից:

Հոդված 30
Գործողության դադարեցումը


Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում մինչև Պետություններից մեկը չդադարեցնի դրա գործողությունը: Պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից հնգամյա ժամանակաշրջանը լրանալուց հետո սկսվող յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով գործողությունը դադարեցնելու մասին ծանուցում ուղարկելով: Այդ դեպքում Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը:

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան դադարեցնելու մասին գրավոր ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից կամ հունվարի մեկից հետո վճարված կամ հաշվանցված գումարների նկատմամբ,

բ) այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան դադարեցնելու մասին գրավոր ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկից կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային ժամանակաշրջանում:

Կատարված է *Մարտինա* քաղաքում, 2006 թվականի նոյեմբերի 6-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն: Բոլոր տարբերակները հավասարազոր են: Սույն Կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում Պետությունները կդեկլարվեն ռուսերեն տեքստով:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի
Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի
հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիայի

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի
Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը
բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիան (այսուհետ՝
Կոնվենցիա) ստորագրելիս Պետությունները պայմանավորվեցին, որ ներքոհիշյալ
դրույթները կազմում են Կոնվենցիայի անբաժանելի մասը:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ.


Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները չեն ներառում ձեռնարկության
կողմից ապրանքների կամ արտադրանքի վաճառքի դեպքերը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ.

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի նպատակների համար՝ տրանսպորտային
միջոցների վարձակալությունից ստացված եկամուտը ներառում է նաև կամ
օդանավի՝ (անձնակազմի հետ) և միջազգային փոխադրումներում օգտագործվող
ավտոմոբիլային տրանսպորտի վարձակալությունից ստացված եկամուտը:

Կատարված է *Պարսևան*... քաղաքում 2006 թվականի նոյեմբերի .6. ին,
երկու բնօրինակով, հայերեն, ղազախերեն և ռուսերեն: Բոլոր տարբերակները
հավասարազոր են: Սույն Արձանագրության մեկնաբանման ժամանակ
տարաձայնություն առաջանալու դեպքում Պետությունները կդեկլարվեն ռուսերեն
տեքստով:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝

